Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N 1հ/դ

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակներ, գնահատման գործիքները տարրական դասարանների դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Հայարփի Խաչատրյան

Ուսուցիչ՝ Մանուշ Լամբարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....2

Գլուխ 1 Գնահատում.....4

1.1 Գնահատման հիմնական սկզբունքներն ու գործառույթները.....5

1.2 Գնահատել ինչու՞, ի՞նչը, ինչպե՞ս, ե՞րբ, ո՞վ, ու՞մ:.....7

1.3 Գնահատման տեսակները.....9

1.4 Հայտորոշիչ գնահատում.....10

1.5 Ձևավորող գնահատում.....11

1.6 Ամփոփիչ գնահատում.....13

Գլուխ 2.....16

Գնահատման գործիքների կիրառությունը տարրական դասարանների դասավանդման գործընթացում.....16

Եզրակացություն.....21

Գրականության ցանկ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է»:

Ա. Էնշտեյն

Գնահատումը կարևոր է ուսումնական գործունեության հաջող իրականացման համար: Գնահատումը հզոր կրթական գործիք է, որն ազդում է ոչ միայն ինքնագնահատականի, այլ նաև անհատի զարգացման վրա որպես ամբողջություն:

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Կրթության որակի բարելավման խնդիրը միշտ արդիական է: Կրթության որակ ասելով հասկանում ենք կրթակարգով, պետական չափորոշիչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխանության աստիճանը:

Նշենք, որ հիմնականում կրթության որակով է պայմանավորված պետության, անհատի, հետևաբար և հասարակության վիճակն ու բարեկեցությունը:Կրթության նկատմամբ ձևական և մակերեսային վերաբերմունքը վնասում է թե՛ հասարակությանը, և թե՛ պետությանը:

Այդ խնդիրների լուծման ժամանակակից մոտեցումներում առանցքային դեր է վերագրվում հանրակրթությունում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգերին:

Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման, այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց:

Գնահատումը բազմաբնույթ եզրույթ է, որը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռք բերման գործընթաց, որն օգտագործվում է սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների մասին որոշումներ կայացնելու համար: Գնահատումը տեղեկատվության ժողովումն է այն բանի մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանի է հասել սովորողը: Գնահատումը պետք է ծառայի հիմնական նպատակին՝ խթանել և ուղղորդել սովորողի կրթական և ճանաչողական գործունեությունը և դրանով իսկ նպաստել նրա զարգացմանը:

Այս հետազոտական աշխատանքի **նպատակն** է պարզել՝ որքանով են արդյունավետ և ճկուն սովորողի գնահատման ձևերը, մոտիվացնում են արդյո՞ք դրանք սովորողին, բարելավում և

խթանում են աշակերտների մոտ քննադատական, վերլուծական մտածողության ձևավորումը և զարգացումը:

Հետազոտության **խնդիրն** է ուսումնասիրել կրթական ոլորտի նորամուծությունները, գնահատման ձևերը՝ ըստ հանրակրթության պետական չափորոշչի և դրա կիրառումը դասապրոցեսին:

Փորձարարական հետազոտությունն անց է կացվել Սպիտակ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի IVբ դասարանում: Հետազոտությանը մասնակցել է 20 աշակերտ:

Աշխատանքի կառուցվածքը. ավարտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, վեց ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Assess՝ գնահատել, բառը ծագել է լատիներեն assidere բառից: Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:[2]

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ[1]:

Սովորողների գնահատման նոր համակարգի մշակումը և կիրառությունը պետք է կատարվի առարկայական չափորոշիչների և ծրագրերի ներդրմանը զուգահեռ: Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին[3]:

1.1 Գնահատման հիմնական սկզբունքներն ու գործառույթները

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը:

2. Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը:

3. Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը:

4. Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը:

5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը:

6. Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը:

7. Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը:

8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը:

10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատումը բացահայտում է նաև ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները:

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն

- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն [4[16/11/2023 19:47]]:

1.2 ԳՆԱՀԱՏԵԼ ԻՆՉՈՒ՞, Ի՞ՆՉԸ, ԻՆՉՊԵ՞Ս, Ե՞ՐԲ, Ո՞Վ, ՈՒ՞Մ:

- **Ի՞նչու ենք գնահատում**

Արձանագրելու արդյունքները

Խթանելու ուսումնառությունը

- **Ի՞նչն ենք գնահատում**

Գնահատման համակարգը պետք ներառի միջոցներ, որոնք կգնահատեն՝

«Գիտելիքներ», «Հմտություններ», «Դիրքորոշում», «Արժեքներ»

Ինչպե՞ս ենք գնահատում

Գնահատումն իրականացվում է գրավոր և բանավոր:Այն կարող է լինել քանակական (արտահայտվի բառերով,թվանշաններով) կամ որակական: Քանակական և որակական գնահատումը հաճախ զուգակցվում է:

Գնահատման համար կիրառվում են հետևյալ միջոցները կամ գործիքները.

1.հարցում

2.առաջադրանքի կատարում /շարադրություն,թելադրություն. . . .

3.հարցարան

4.թեստ

5.գնահատման սանդղակ

6.ուսումնական թղթապանակ

7.ստուգատես

8. ցուցադրություն և այլն

Ե՞րբ ենք գնահատում

Ըստ ուսումնական գործընթացի նպատակի կիրառվում է.

-**նախնական գնահատում՝** բացահայտվում է սովորողների պատրաստվածության աստիճանը, որն էլ օգնում է պլանավորել ուսուցման հետագա գործընթացը

-**ընթացիկ գնահատում՝** ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը

-**ամփոփիչ գնահատում՝** ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացքի առարկայի յուրացման աստիճանը

-**պարտադիր ամփոփիչ** գնահատում՝ ստուգվում են հիմնական և միջնակարգ դպրոցի շրջանավարտի ուսումնական գործունեության արդյունքները:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են նաև սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որոկավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Ո՞վ է գնահատում

1. Ուսուցիչը
2. Տնօրինությունը
3. Սովորողը
4. ԿԳՄՆ-ն
5. ԳԹԿ-ն
6. Միջազգային կազմակերպությունները

Ու՞մ է գնահատում

- Սովորողին
- Ուսուցչին
- Դպրոցին
- և այլն

1.3 Գնահատման տեսակները

Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող): [2]



1.4 ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.

2) բանավոր հարցում.

3) բաց հարցերով քննարկում.

4) այլ: [2]

1.5 Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որը պարբերաբար իրականացվում է ուսուցիչի կողմից ուսումնական գործընթացի ամբողջ ընթացքում և ուղղված է սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի, առկա դժվարությունների բացահայտմանը և որի ընթացքում արձանագրված տեղեկությունները օգտագործվում են ուսուցիչների և սովորողների կողմից ուսուցման և ուսումնառության գործընթացը բարելավելու համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը: Հանրակրթական պետական չափորոշիչ:

Ձևավորող գնահատման համար ուսուցիչը իրականացնում է՝

- ձևավորող գնահատման պլանավորում
- ձևավորող գնահատման մեթոդի ընտրություն
- ձևավորող գնահատման կազմակերպում և իրականացում
- ձևավորող գնահատման արդյունքների վերլուծություն
- հետադարձ կապի ապահովում

Ձևավորող գնահատման պլանավորման և կազմակերպման համար ուսուցիչը կազմում է ձևավորող գնահատման գործընթացը արտացոլող դասի ծրագիրը, բարելավի կիրառվող մեթոդների որակը, օգտագործի հետադարձ կապի տրամադրման արդյունավետ ձևեր, իրականացնի դասերի վերլուծություն (սովորողների աշխատանքի որակ,գնահատման գործիքների որակ, գործընկերների հետ հետադարձ կապ,զրույցներ ծնողների հետ, այլ), ինքնավերլուծության և մանկավարժական գործունեության կատարելագործման համար: Ձևավորող գործընթացը կազմված է գնահատման գործընթացի երեք բաղադրիչներից՝ գնահատում ուսուցչի կողմից, ինքնագնահատում և սովորողների փոխադարձ գնահատում: Սովորողների ինքնագնահատման ընթացքում խրախուսվում են սովորողների ինքնակարգավորման, ինքնուրույն ուսուցման կարողությունները՝ օբեկտիվության հիմքի վրա:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) տնային աշխատանք.

6) նախագծային աշխատանք.

7) քննարկում, բանավեճ.

8) այլ [2]:

Ձևավորող գնահատման հնարներ. Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները: Ձևավորող գնահատման մեթոդներ- «Մուտքի քարտեր», «Ջերմաչափում», «Հարցադարան», «Գիտելիքների բուրգ», «Ադամանդների հիերարխիա», «Խմբագրական խորհուրդ», «Արտաքին և ներքին շրջանակներ», «Չորս անկյուններ», «Երեքրոպեանոց դադար», «Ելքի քարտեր», «Մեդալ» և այլն... [4[29 /11/2023/18:16]]

1.6 ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով:

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:

Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1(մեկ), 2(երկու), 3(երեք), 4(չորս), 5(հինգ), 6(վեց), 7 (յոթ), 8(ութ), 9 (ինը), 10(տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշումները՝

1) սովորողի բացակայության դեպքում՝ «բ».

2) միավորային գնահատման հաստատված ձևերը չկատարելու դեպքում՝ «-»:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի

անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերն ու անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

. Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ.

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) նախագծային աշխատանք.

6) այլ:

Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:

Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը.

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել.

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը.

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը.

3) տեղեկատվության մտապահումը.

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը.

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան.

6) սովորողի ինքնուրույնությունը.

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին.

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները[2]:

Գլուխ 2

2.1 Գնահատման գործիքների կիրառությունը տարրական դասարանների դասավանդման գործընթացում:

Գնահատումը ձևավորում է աշխարհայաց, քննադատական մտածողություն: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ է: Տարրական դպրոցի դասավանդման գործընթացում կիրառվում են գնահատման բոլոր ձևերը: Ժամանակակից կրթության նպատակներից մեկն է զարգացնել այնպիսի անհատ, որը պատրաստ լինի ինքնակրթության, ինքնազարգացման և ինքնադաստիարակման: Ուստի դասաժամերի խնդիրներից մեկն է երեխաների մոտ ձևավորել ճանաչողական հետաքրքրություն, սեփական գործունեության վերահսկում, անդրադարձ կատարելու կարողություն և կրթվելու պատրաստակամություն: Պարտադիր է դասի անդրադարձը, քանի որ այն ձևավորող գնահատման բաղկացուցիչ մասն է: Հենց սրա օգնությամբ է ուսուցիչը վեր հանում սովորողի բացերը, չհասկացած թեմաները: Անդրադարձի համար հաճախ կիրառում ենք «Կիսատ նախադասություն» մեթոդը: Փորձարարական դասի թեման է «Պարույր Սևակ «Քիչ ենք բայց հայ ենք» բանաստեղծությունը»:(Տե՛ս դասի պլան)

Դասի ավարտին աշակերտները պետք է շարունակեն հետևյալ նախադասությունները.

Ի՞նչ սովորեցի……

Ի՞նչ հասկացա….

Ի՞նչ մտածեցի…..

Այս կիսատ նախադասությունները թույլ են տալիս՝ պարզելու, թե ինչը՞ անհասկանալի մնաց սովորողի համար, սովորողն ինքն է առաջարկում ուսումնառության ձևեր, հնարներ, որն էլ իր հերթին մոտիվացնում է սովորողին: Անհասկանալի հարցերին անդրադառնում են հաջորդ դասաժամին:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ IVբ

Դասվար՝ Մ. Լամբարյան

Առարկա՝ Մայրենի

Դասի թեման՝ Քիչ ենք բայց հայ ենք: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստ:

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Աշակերտները՝

Կամրապնդեն բանաստեղծությունն արտահայտիչ կարդալու կարողությունները,

Կստեղծեն կապակցված խոսք՝ իրար միացնելով ընթերցածից և կից նկարից ստացած տպավորությունը,

Կնկարագրեն հայ ժողովրդին՝ վերագրելով նրան հատկանիշներ

Գաղափար կկազմեն բառի ուղիղ և փոխաբերական իմաստների մասին

Դասին կիրառվող մեթոդները՝ Մտագրոհ, Կանխագուշակում, անավարտ նախադասություն

Դասի կահավորումը՝ Նկարներ, պաստառներ, դասագիրք

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Դասանյութի բովանդակության ընկալման նախապատրաստելու համար դասը սկսել «Ո՞վ ենք...» խաղ-վարժանքի կիրառմամբ:

- Դասարանը բաժանվում է 5 խմբի: Ուսուցիչը յուրաքանչյուր խմբի տալիս է ծրար, որը պարունակում է 5 նախադասութուն տարբեր երկրների և ազգությունների մասին, որոնցից մեկը Հայաստանի և հայերի մասին է: Այնուհետև սովորողներին բացատրում է, որ խմբերը դրանց միջից պետք է ընտրեն այն 5 մտքերը, որոնք վերաբերվում են Հայաստանին և հայ ազգին: Աշխատանքն ավարտելուց հետո խմբերն իրենց առանձնացրած

մտքերը փակցնում են գրատախտակին փակցված Հայաստանի քարտեզի վրա: Ուսուցիչն աշխատանքն ամփոփում է՝ ասելով՝ Հայաստանը և հայ ազգին բնորոշող էլ ի՞նչ նախադասություններ կավելացնեք:

<u>Իմաստի ընկալման փուլ</u>

- Ստեղծագործության բովանդակության կանխագուշակում

Բանաստեղծության մեջ Պարույր Սևակը ընդգծում է այն միտքը, որ մենք՝ հայերս, փոքրաթիվ ենք, սակայն մեծ... Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞վ ենք մեծ կամ ինչու՞ է Սևակը մեզ՝ հայերիս, մեծ համարում (լսել սովորողների կանխատեսումները):

- Բառային աշխատանք մինչև տեքստի ընթերցումը

Առաջին ընթերցման ժամանակ Սևակի ուղերձն ու ընկալումն ապահովելու համար նպատակահարմար է որոշ բառեր մինչև ընթերցումը բացատրել բանավոր:

- Տեքստի արտահայտիչ ընթերցում ուսուցչի կողմից:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու նպատակով

- Ի՞նչ հույզեր առաջացրեց բանաստեղծությունը ձեր մեջ:
- Թվարկե՛ք՝ ովքե՞ր կամ ինչե՞րն էին հպարտության զգացում ծնում բանաստեղծի հոգում:
    - Տեքստի բարձրաձայն ընթերցում սովորողների կողմից:

Բանաստեղծությունը ընթերցել մեկնաբանություններով՝ «Զրույց հեղինակի հետ» հնարի կիրառմամբ:

Ուղղորդող հարցեր և առաջադրանքներ

- «Քիչ ենք» ասելով հեղինակը ի՞նչ նկատի ունի:
- Մտորե՛ք՝ ինչպե՞ս է հնարավոր գերել գրքերով:
- Մեկնաբանե՛ք «Կանք, պիտի լինենք, ու դեռ շատանանք» տողերը:
- Ըստ բանաստեղծության՝ ո՞ր հատկանիշներն են բնորոշ հայ ժողովրդին:

- Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ:
    - Բառի ուղիղ և փոխաբերական իմաստների մասին գիտելիքներն ամրապնդելու նպատակով կազմակերպել խաղ- վարժանք: Ուսուցիչը ասում է բառակապակցություններ, եթե այդ բառակապակցություններում

ածականը գործածված է ուղիղ իմաստով, սովորողները մնում են նստած, եթե փոխաբերական իմաստով՝ կանգնում են:

Ծանր բեռ, գիժ քամի, պայծառ միտք, ծանր քար և այլն:

- Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար:
- «Ինքնուրույն աշխատանք» պաստառի վրա փակցնել տարամակարդակ առաջադրանքներ:
- Քաղցր, ոսկի, պայծառ բառերը տեղադրի՛ր նախադասությունների մեջ:
- Կազմի՛ր նախադասություններ քաղցր, ոսկի, պայծառ բառերի ուղիղ և փեխաբերական իմաստներով:

<u>Կշռադատման փուլ</u>

Անդրադարձ տեքստի նկարազարդմանը և բովանդակությանը:

- Ի՞նչ է պատկերված նկարում: Այն համապատասխանու՞մ է բանաստեղծության բովանդակությանը:

Ամփոփում

- Ձրույց բանաստեղծության բովանդակության շուրջ հետևյալ հարցերի առաջադրմամբ:

Ի՞նչ սովորեցի....

Ի՞նչ հասկացա...

Ի՞նչ մտածեցի....

Տնային հանձնարարություն: Դասը կարդալ:

Եզրակացություն

Ավարտական աշխատանքի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունը.

- Աշակերտի համար գնահատականը պետք է խրախուսի, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց հանդիսանա: Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար (մանկավարժական անձնակազմ և այլն) ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու միջոց լինի:
- Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի վերահսկումն է:
- Գնահատման գործիքները օգնում են սովորողին բարելավելու սեփական գիտելիքներն ու ընկալումները, խթանելու ինքնավստահությունն ու սովորելու խանդավառությունը, ինչպես նաև ինքնաանդրադարձ, վերլուծություններ կատարելու, զարգացնելու ինքնագնահատման հմտությունները և բացահայտելու հաջողության հասնելու երաշխիքները:
- Սովորողին տրվում է հնարավորություն մասնակցել իր ուսումնառությանը, ընտրել դասապրոցեսի վարման ձևեր, հնարներ:
- Ուսուցչի պատրաստվածության բարձր մակարդակը սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների բարելավման և որակավորման լավագույն երաշխիքն է:
- Առաջարկվում է սովորողներին ավելի մեծ հնարավորություն տալ մասնակցելու իր ուսումնառությանը, ընտրել դասապրոցեսի վարման ձևեր և հնարներ, ինչպես նաև մասնակցել գնահատմանը: Աշակերտը պետք է հնարավորինս ակտիվ ընդգրկվի գնահատման գործընթացում,ստանա արդյունքների մանրամասն բացատրություն և կարողանա արդյունքներն օգտագործել առաջադիմության բարձրացման համար, կարողանա դատողություններ անել իր աշխատանքի բավարար կամ անբավարար վիճակի մասին, պարզի, թե ինչի՞ վրա պետք է ավելի շատ աշխատել:

Օգտագործված գրականությունների ցանկ

1. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան, 2020
2. Հանրակրթության պետական չափորոշիչ
3. (https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4)
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4#%D4%B3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BD%D5%AF%D5%A6%D5%A2%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%B6_%D5%B8%D6%82_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8